Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 942 - Ա
որոշման

«ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՅՈՒՅԻՉՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ, ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ, Գյուլագարակ և Սպիտակ համայնքների 45 կարիքավոր ընտանիքների բնակիչներին ապահովել մշտական տաք ջրով, առանց լրացուցիչ ծախսեր կատարելու և այլ էներգակիրներ կիրառելու:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Շվեյցարիայի «Լիթլ բրիդջ Շվեյզ» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Շվեյցարիա, 7000 Չուր)
4.	Ծրագիրը կատարողը	«Աստղիկ» բարեգործական հիմնադրամ (իրավաբանական հասցեն՝ ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 24 շենք, բնակարան 30, ՀՎՀՀ՝ 00472741)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Փամբակ համայնքի Արջուտ, Վահագնաձոր, Եղեգնուտ, Անտառամուտ, Ձորագյուղ, Բազում, Ազնվաձոր, Վահագնի բնակավայրեր, Գյուլագարակ համայնքի Կուրթան բնակավայր, Սպիտակ համայնքի Հարթագյուղ և Ծաղկաբեր բնակավայրեր Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	12,815,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ, Գյուլագարակ և Սպիտակ համայնքների 45 կարիքավոր ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հունվարի 20-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ, Գյուլագարակ և Սպիտակ համայնքների 45 կարիքավոր ընտանիքների բնակելի տների համար մեկական արևային ջրատաքացուցիչների անհատույց տրամադրում և տեղադրում՝ 12,815,000 դրամ ընդհանուր արժեքով: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 20-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	45 ընտանիքների համար արևային ջրատաքացուցիչների մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 12,815,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռու մարզի Փամբակի և Գյուլագարակի համայնքապետարաններ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերաբերյալ սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում Շվեյցարիայի «Լիթլ բրիդջ Շվեյզ» բարեգործական հիմնադրամին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ